ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4

ք. Երևան «09» 06 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 40742000(քառասուն միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի 1	«ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան Լենինգրադյան 21/2 Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ 1570060108451000 ՀՎՀՀ 00537395
ՀՎՀՀ 02593108	
Վ. Պապիկյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	Ա.Խաչատրյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«09» 06 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111170/517	Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի BYD SONG PLUS 2024թ. արտադրության – թվով 20 ավտոմեքենայի վերանորոգման և սպա-սարկման ծառայությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է իրականացնել ավտոմեքենաների առջևի և հետևի ցնցամեղմիչների, հարվածամեղմիչների փոշեթիկնոցների փոխարինում օրիգինալ պահեստամասերով, մինչև 90 հատ նոր անվադող (ամառային, ձմեռային ըստ գնորդի պահանջի): Անվասկավառակի չափսերը 20/255/45, 19/235/50, 19/255/50, 17/215/-55, բալանսավորում (մինչև 500 անգամ ըստ գնորդի պահանջի), դիմացի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի), հետևի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի): Անվադողի արտադրության տարեթիվը - ոչ շուտ, քան 2026թ., չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Փոխադրումը մատակարարի կողմից ինչպես նաև անվադողի փոխարինում 2 անգամ (բալանսավորում) և անվադողերի պահեստավորում: Ծառայությունները մատուցվելու են շաբաթվա մեջ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շաբաթ, կիրակի և տոն օրերին:	դրամ	մինչև 19360000	1	Ք.Երևան	Պայմանագիրը /համաձայնագիրը/, օրենքով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

2	50111170/518	Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի BYD QIN PLUS 2024թ. արտադրության – թվով 19 ավտոմեքենայի վերանորոգման և սպա-սարկման ծառայությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է իրականացնել ավտոմեքենաների առջևի և հետևի ցնցամեղմիչների, հարվածամեղմիչների փոշեթիկնոցների փոխարինում օրիգինալ պահեստամասերով, մինչև 38 հատ նոր անվադող (ամառային, ձմեռային ըստ գնորդի պահանջի): Անվասկավառակի չափսերը 20/255/45, 19/235/50, 19/255/50, 17/215/-55, բալանսավորում (մինչև 500 անգամ ըստ գնորդի պահանջի), դիմացի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի), հետևի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի): Անվադողի արտադրության տարեթիվը - ոչ շուտ, քան 2026թ., չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Փոխադրումը մատակարարի կողմից ինչպես նաև անվադողի փոխարինում 2 անգամ (բալանսավորում) և անվադողերի պահեստավորում: Ծառայությունները մատուցվելու են շաբաթվա մեջ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շաբաթ, կիրակի և տոն օրերին:	դրամ	մինչև 11442000	1	Ք.Երևան	Պայմանագիրը /համաձայնագիրը/, օրենքով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

3	50111170/519	Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի MAXUS DANA V1 2024թ. արտադրության – թվով 12 ավտոմեքենայի վերանորոգման և սպա-սարկման ծառայությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է իրականացնել ավտոմեքենաների առջևի և հետևի ցնցամեղմիչների, հարվածամեղմիչների փոշեթիկնոցների փոխարինում օրիգինալ պահեստամասերով: Անվասկավառակի չափսերը 20/255/45, 19/235/50, 19/255/50, 17/215/-55, բալանսավորում (մինչև 500 անգամ ըստ գնորդի պահանջի), դիմացի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի), հետևի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի): Տեխնիկական պահանջները, անվտան-գությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Փոխադրումը մատակարարի կողմից ինչպես նաև անվադողի փոխարինում 2 անգամ (բալանսավորում) և անվադողերի պահեստավորում: Ծառայությունները մատուցվելու են շաբաթվա մեջ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շաբաթ, կիրակի և տոն օրերին:	դրամ	մինչև 7536000	1	Ք.Երևան	Պայմանագիրը /համաձայնագիրը/, օրենքով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

4	50111170/520	Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ZEEKR 009 2024թ. արտադրության – թվով 1 ավտոմեքենայի վերանորոգման և սպա-սարկման ծառայությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է իրականացնել ավտոմեքենաների առջևի և հետևի ցնցամեղմիչների, հարվածամեղմիչների փոշեթիկնոցների փոխարինում օրիգինալ պահեստամասերով, մինչև 6 հատ նոր անվադող (ամառային, ձմեռային ըստ գնորդի պահանջի): Անվասկավառակի չափսերը 20/255/45, 19/235/50, 19/255/50, 17/215/-55, բալանսավորում (մինչև 500 անգամ ըստ գնորդի պահանջի), դիմացի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի), հետևի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի): Անվադողի արտադրության տարեթիվը - ոչ շուտ, քան 2026թ., չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Փոխադրումը մատակարարի կողմից ինչպես նաև անվադողի փոխարինում 2 անգամ (բալանսավորում) և անվադողերի պահեստավորում: Ծառայությունները մատուցվելու են շաբաթվա մեջ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շաբաթ, կիրակի և տոն օրերին:	դրամ	մինչև 682000	1	Ք.Երևան	Պայմանագիրը /համաձայնագիրը/, օրենքով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

5	50111170/521	Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Mercedes-Benz EQE500 2023թ. արտադրության – թվով 1 ավտոմեքենայի վերանորոգման և սպա-սարկման ծառայությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է իրականացնել ավտոմեքենաների առջևի և հետևի ցնցամեղմիչների, հարվածամեղմիչների փոշեթիկնոցների փոխարինում օրիգինալ պահեստամասերով, մինչև 6 հատ նոր անվադող (ամառային, ձմեռային ըստ գնորդի պահանջի): Անվասկավառակի չափսերը 20/255/45, 19/235/50, 19/255/50, 17/215/-55, բալանսավորում (մինչև 500 անգամ ըստ գնորդի պահանջի), դիմացի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի), հետևի ռազվալ (մինչև 200 անգամ ըստ գնորդի պահանջի): Անվադողի արտադրության տարեթիվը - ոչ շուտ, քան 2026թ., չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Փոխադրումը մատակարարի կողմից ինչպես նաև անվադողի փոխարինում 2 անգամ (բալանսավորում) և անվադողերի պահեստավորում: Ծառայությունները մատուցվելու են շաբաթվա մեջ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև շաբաթ, կիրակի և տոն օրերին:	դրամ	մինչև 1722000	1	Ք.Երևան	Պայմանագիրը /համաձայնագիրը/, օրենքով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1

ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան _____
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Լենինգրադյան 21/2
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570060108451000
ՀՎՀՀ 00537395

Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1
« » 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 *ծածկագրով պայմանագրի*

*ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ**

ԳՆԱՑՈՒՑԱԿ

		Չափաբաժին 1 BYD SONG PLUS	Չափաբաժին 2 BYD QIN PLUS	Չափաբաժին 3 MAXUS DANA V1	Չափաբաժին 4 ZEEKR 009	Չափաբաժին 5 Mercedes-Benz EQE500
	Ծառայությունների և ընթացքում օգտագործվող պահեստամասերի անվանումները	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	Առջևի ցնցամեղմիչ	90000	80000	120000	0	250000
2	Հետևի ցնցամեղմիչ	90000	80000	120000	0	220000
3	ցնցամեղմիչի հանում և տեղադրում	15000	15000	15000	0	15000
4	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10000	10000	10000	0	10000
5	Ռազվալ դիմացի	24000	24000	24000	24000	24000
6	Ռազվալ հետևի	24000	24000	24000	24000	24000
7	անվադող	100000	80000		120000	120000
8	Անվադողի փոխարինում բալանսավորում	2500	2500	0	2500	2500
Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.		**355500**	**315500**	**313000**	**170500**	**665500**
Ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինը		**264000**	**264000**	**264000**	**120000**	**600000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1

ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան _____
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Լենինգրադյան 21/2
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570060108451000
ՀՎՀՀ 00537395

Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«09» 06 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111170/517	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %
2	50111170/518	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %
3	50111170/519	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	...%	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %

4	50111170/ 520	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %
5	50111170/ 521	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ	...%	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %	.. %

*Վճարման ժամանակացույցը կսահմանվի կողմերի միջև կնքվելիք համաձայնագրով՝ 2026թ. ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1

ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան _____
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Լենինգրադյան 21/2
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570060108451000
ՀՎՀՀ 00537395

Ա.Խաչատրյան _____
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
«09» 06 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 ***ծածկագրով պայմանագրի***

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«09» 06 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 ***ծածկագրով պայմանագրի***

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«09» 06 2026 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-26/4 ***ծածկագրով պայմանագրի***

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով
ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.